ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 Նոյեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

165
(3015)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՓԱՅՏԻԿԸ ՔՊ-ԻՑ ԱԼԽԱՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄՈՏ Է

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել այն երջանիկ հեղափոխականների կենսամակարդակի աճի տվյալները, որոնք հակասում են տնտեսագիտական բոլոր հայտնի եւ անհայտ նորմերին:

ՔՊ խմբակցությունում կա մի պատգամավոր՝ Ալխաս Ղազարյան, ով, ըստ պաշտոնական կենսագրության, մինչեւ մանդատ ստանալը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտից վարձատրվում էր գիտնականի համեստ աշխատավարձով՝ տարեկան 300-600 հազար դրամի սահմաններում:

Զարմանալին այն է, որ ԳԱԱ-ին զուգահեռ ստանձնելով ԱԺ պատգամավորի բազմազբաղ աշխատանքը՝ տրամաբանորեն ԳԱԱ-ում պետք է նվազեր Ղազարյանի աշխատավարձը, կամ գոնե մնար նույնը, քանի որ «պատգամավոր գիտաշխատողը» եւ «պարապ գիտաշխատողը» տարբեր օրակարգեր ու զբաղվածություն ունեն: Բայց Ալխաս Ղազարյանի տարեկան աշխատավարձը (եկամուտը) հատել է 2 միլիոն դրամի շեմը՝նախկին 300 հազարի փոխարեն:

Միաժամանակ, Մարտունու Վաղաշեն գյուղում ծնված-մեծացած Ալխաս Ղազարյանը, ինչպես ցանկացած հեղափոխական ՔՊ-ական, 2023 թվականին 30.8 միլիոն դրամով ձեռք է բերել բնակարան Երեւանի Նորք-Մարաշ վարչական շրջանում:

Առավել զարմանահրաշ են Ղազարյանին փոխկապակցված անձի՝ եղբոր՝ Դավիթ Ղազարյանի հետհեղափոխական հաջողությունները:

Եթե այն ժամանակ, երբ քույրը պաշտոն էր ստանձնում, Դավիթ Ղազարյանի տարեկան եկամուտը 5 միլիոն դրամ էր, մեկ տարի անց անհատ ձեռնարկատեր Դավիթ Ղազարյանը տարին ավարտել է 26.5 միլիոն դրամ եկամուտով, իսկ ամենաանհասկանալին՝ անհատ ձեռնարկատեր Ղազարյանը, թողնելով այս եկամուտները, 2023 թվականին տեղափոխվել է վարչապետի աշխատակազմ՝ չինովնիկի համեստ աշատավարձ ստանալու: Անհավատալի զարգացումներ:

Նիկոլ Փաշինյանի կողմից ՍՄՍ հաղորդագրություններով պաշտոնանկ անելու սարսափը մարզեր է հասել: Օրենսդիրում եւ գործադիրում կատարվող «մաքրազերծումներին» զուգահեռ՝նա մաքրում է նաեւ ՔՊ մարզային կառույցները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Նիկոլ Փաշինյանը ՔՊ վարչության փոխնախագահ Գեւորգ Պապոյանին, որը ՔՊ-ի, այսպես ասած, «մարզային պատասխանատուն» է, հրահանգել է մաքրել թիմը, եւ ՔՊ մարզային կառույցների այն անդամները, որոնք այս կամ այն կերպ սկանդալների կենտրոնում են հայտնվել, հեռացվում են թիմից: Այսինքն՝Նիկոլ Փաշինյանը ընտրություններից առաջ որոշել է մաքրել թիմն ու ազատվել սկանդալային կերպարներից, որ ձայներ կարողանա հավաքել: Սրան զուգահեռ Փաշինյանը մարզային կառույցների ղեկավարների պաշտոններում իր վստահելի մարդկանց է նշանակում: Օրինակ՝Փաշինյանի սանիկը՝ՏԿԵ նորանշանակ նախարար Դավիթ Խուդաթյանը, որը մինչ այս Արմավիրի մարզպետի պաշտոնն է զբաղեցրել, օրեր առաջ ընտրվել է Արմավիրի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ: Ակնհայտ է, որ ՔՊ-ն արդեն իսկ պատրաստվում է 2026 թվականի հերթական, կամ գուցե արտահերթ ընտրություններին: Բայց քաղաքացիների քվեն սկսել է հետաքրքրել մարդկանց:

Հակակոռուպցիոն կոմիտեն, որը Նիկոլ Փաշինյանի թեթեւ ձեռքով 2 շաբաթ է ղեկավար չունի, առաջիկայում կպատրաստվի Կոմիտեի նախագահի ընտրություններին, որը երկարատեւ գործընթաց է: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրությունների համար նախ պետք է հայտարարվի մրցույթ, ապա ձեւավորվի ընտրող հանձնաժողով: Սասուն Խաչատրյանի՝sms-ով հեռանալուց հետո Հակակոռուպցիոն կոմիտեն, որպես նախագահի ժամանակավոր պաշտոնակատար, ղեկավարում է Փաշինյանի վաղեմի ծանոթ, «Մարտի 1»-ի քննչական խմբի ղեկավար, արդարադատության գնդապետ Էդիկ Հակոբյանը: Հարկ է նշել, որ Էդիկ Հակոբյանը «Հաց բերող» Արթուր Սարգսյանին կալանավորողն է եղել, ում 2024 թվականի գարնանը ՀՀ նախագահի հրամանով շնորհվել է երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան: Իսկ ինչ ունեցվածք ունի Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Էդիկ Հակոբյանը: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի նրա հայտարարագիրը, ըստ որի՝Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը հայտարարագրել է 2 անշարժ գույք՝1 անհատական բնակելի տուն, 1 հողամաս: 2023 թվականին Հակոբյանը ձեռք է բերել 2022 թվականի արտադրության Lexus մակնիշի մեքենա, որն արժեցել է 15 մլն 300 հազար դրամ: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են գրեթե 800 հազար դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է գրեթե 500 հազար դրամով: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 մլն 400 հազար դրամ (կանխիկ դրամական միջոցները գրեթե կրկնապատկվել են): Նախորդ տարվա՝2022 թվականի համեմատ, տարեկան եկամուտներն ավելացել են գրեթե 4 մլն դրամով: Կոմիտեի նախագահի տեղակալի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 44 մլն 369 հազար դրամ, որից 27 մլն 840 հազարը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեից: Էդիկ Հակոբյանի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 35 մլն 437 հազար դրամ, որից 21 մլն 313 հազարը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է, ինչի համար էլ Հակոբյանը ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացել է 2 մլն 875 հազար դրամ՝եկամտահարկի վերադարձի օրենքով հիփոթեքի մայր գումարը մարելու համար: Վարկի մարմանն ուղղել է 8 մլն 222 հազար դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանը նեղսրտել է իր թիմակիցներից. պատճառն իր մտերիմ ընկերոջ՝Նարեկ Ջեյնալյանի պատգամավորական մանդատը վայր դնելու պահանջն է Փաշինյանի կողմից: Հիշեցնենք, որ իր ելույթի ժամանակ Ջեյնալյանը կոպիտ ձեւով կշտամբեց ՔԿ արդեն նախկին նախագահ Արգիշտի Քյարամյանին՝ասելով նրան. «Դուք խոսում եք Ազգային ժողովի պատգամավորների հետ, Ձեր կաբինետում չեք եւ Ձեր ենթակաների հետ չեք խոսում: Ես չեմ կարողանում ընկալել՝որն է ավելի վատ՝հասկանալով որտեղ եք գտնվում եւ նման ոճո՞վ եք խոսում պատգամավորների հետ, թե՞ հակառակը»: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Արարատ Միրզոյանը թիմակիցների հետ զրույցում ասել է, որ անարդար են վարվել Նարեկ Ջեյնալյանի հետ, Միրզոյանի պնդմամբ՝վերջինս զուսպ անձնավորություն է, եւ պետք չէր նրան զրկել մանդատից, քանի որ կան այլ պատգամավորներ ովքեր խայտառակ միջադեպերի կենտրոնում են հայտնվել, բայց Փաշինյանը նրանց հանդեպ բարեհաճ է գտնվում ու չի պատժում: Բանն այն է, որ Նարեկ Ջեյնալյանն Արարատ Միրզոյանի ընկերն է, ու հիմա Փաշինյանի՝Ջեյնալյանին մանդատից զրկելու հարցը խիստ վրդովվեցրել է նրան, ինչի մասին արտահայտվել է նաեւ վարչության անդամների մոտ:

ԶՐՈՒՅՑ

Ա. ՆԻԿՈԼՅԱՆԸ՝ ԱԿՑԻԱՅԻ ԵՎ ԻՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երկրում տիրող խառնաշփոթի ժամանակ շատ արվեստագետներ, դերասաններ, անգամ ոճաբաններ լուռ են մնում, բայց կան նաեւ բացառություններ:

Օրինակ՝ դիզայներ Արամ Նիկոլյանն այն եզակիներից մեկն է, որը չի համակերպվում, արտահայտում է իր կարծիքն ու անգամ մասնակցում բողոքի ակցիաների:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ոճաբան Արամ Նիկոլյանի հետ:

-Արամ, նորաձեւության ինդուստրիայից դուրս Դուք բավականին ըմբոստ քաղաքացի եք, մասնակցում եք տարբեր բողոքի ակցիաների, չեք լռում, սակայն նույն ոլորտի շատ այլ ներկայացուցիչներ շարունակում են լռել: Ըստ Ձեզ՝ ի՞նչն է նրանց լռության պատճառը:

-Պատճառ նշել չեմ կարող: Բայց կարող եմ նշել, որ ես խոսում եմ թեմաներից, որոնք ինձ համար կարեւոր են, մոտ են իմ հոգուն եւ ազգայինի լինելիության խնդիր են: Միգուցե հաճախ որոշ ակցիաների չեմ մասնակցում, օրինակ՝ տրանսպորտի թանկացման հարցով բողոքի ակցիաներին, բայց երբ պետականության եւ արժեհամակարգային լուրջ խնդիրներ եւ հարցեր կան, միանշանակ, լուռ չեմ մնում:

-Ի՞նչ եք կարծում, մյուսներին այդ թեմաները չե՞ն հուզում:

-Կարող են հուզել այդ հարցերը, կարող են վախենալ, կարող են չցանկանալ ասոցացվել: Շատ դժվար է, գրեթե անհնար՝ ուրիշի փոխարեն պատասխանելը: Ես կարող եմ իմ կարծիքն ասել, որ կան կատարվելիք որոշ բաներ, որոնց հետ հաշտ չեմ եւ այդ հարցում ունեմ իմ առանձին կարծիքը, ինչի համար որեւէ քաղաքական ուժի հարելու կարիք չկա: Կարիք չկա ինչ-որ «ական» լինել, ինչպես հաճախ ասվում է: Պետք է սիրես քո երկիրը, սիրես քո արժեքները եւ, առհասարակ, գնահատես այն, ինչ ունես:

-«Արցախի ձայներ» նախագիծը աջակցության խնդրանքով դիմել էր գործընկերներին, եւ ոչ միայն: Կոչին արձագանքել են բազմաթիվ հայտնիներ, այդ թվում եւ Դուք: Ինչո՞ւ նման որոշման հանգեցիք եւ ինչպե՞ս եք պատկերացնում այդ աջակցությունը:

-Ցանկացած պարագայում, լինելով նաեւ ՀՀ քաղաքացի եւ կայացած մասնագետ, իմ աջակցությունը բացառապես իմ մասնագիտության միջոցով է: Դեռ վաղուց աշխատել եմ նախագծի հիմնադրի հետ, ում հետ վաղեմի ընկերներ ենք, եւ ինչպես եղել եմ նրանց կողքին, այդպես էլ հիմա կամ եւ սատարում եմ:

-Ապրիլի 15-ին՝ Ծանրամարտի Եվրոպայի առաջնության բացման արարողության ժամանակ, Դուք այրեցիք Ադրբեջանի դրոշը, ինչը մեծ քննարկում առաջացրեց եւ Ձեզ դուրս հրավիրեցին դահլիճից: Ի՞նչ տեղի ունեցավ դրանից հետո Ձեր կյանքում: Կարծես թե իշխանությունները տրամադրված են Ձեր անձի դեմ:

-Դուրս չհրավիրեցին, ձերբակալեցին. դա ֆիքսենք: Այդ օրը կատարվում էր մի բան, որի հետ համաձայն չէի: Մի քանի օր առաջ սահմանին կրկին զոհեր էինք ունեցել, եւ այդ օրը զոհված տղաների թաղումն էր Եռաբլուրում. ինձ համար անընդունելի էր տվյալ պահին այդ դրոշը տեսնել Եռաբլուրից մի քանի մետր հեռավորության վրա: Դա էր իմ բողոքի ակցիայի նպատակը եւ պատճառը: Այդ շրջանում շրջափակման մեջ էր նաեւ Արցախը, դա նաեւ խոսք էր Արցախի լռության դեմ: Իրականացվածն ակցիա էր, որն արվում է տարբեր միջոցառումների ժամանակ: Լայն հասարակության ընկալումն ու արձագանքը ինձ համար ցավոտ էր, քանի որ արարքիս մեջ չէի գտնում մի բան, որը կարող էր հասարակությունը բաժանել երկու մասի: Դա այն խնդիրը չէր, որի համար պետք էր հանրությունն այդքան չարանար, առավել եւս պետության կամ պետական այրերի կողմից ճնշումներն էին տարօրինակ: Ոչ ոք իմ արարքի սխալ լինելը մինչ օրս չի բացատրել ինձ, եւ իմ կյանքում ոչինչ չի փոխվել. շարունակում եմ աշխատել իմ մասնագիտությամբ:

-Ձեր դեմ տրամադրվա՞ծ են:

-Միգուցե, բայց ես ապրում եւ աշխատում եմ ինչպես առաջ:

-Նախկինում վարչապետի տիկնոջ հագուստներն էիք մոդելավորում, իսկ հիմա՞:

-Մոդելավորմամբ չեմ զբաղվել: Վարչապետի տիկինը, ինչպես բոլորը, հնարավորություն է ունեցել դիմելու ինձ, ես էլ, ինչպես ցանկացած հաճախորդի, սպասարկել եմ, ինչպես նաեւ վարչապետի համար եմ կոստյումներ կարել մի քանի անգամ. ծառայել եմ իմ երկրին, որում խնդիր չեմ տեսնում:

-Միջադեպից հետո շարունակե՞լ են օգտվել Ձեր ապրանքանիշից:

-Նման դեպք չեմ հիշում:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԱՂԱՔԱՐՅԱՆԸ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ Է ՈՒՔԵԼ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՍՊԱՍՈՒՄ Է ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՐՈՇՄԱՆԸ

ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը նոյեմբերի 25-ին խորհրդարանում փակ հանդիպում է ունեցել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ:



Թեեւ պատգամավորը նախապես հայտարարել էր, որ ամսի 25-ին՝ ժամը 18:00-ին, պետք է հայտարարի մանդատը վայր դնել-չդնելու վերաբերյալ իր որոշման մասին, բայց Սիմոնյանի հետ հանդիպումից հետո Հովիկ Աղազարյանը ինչ-ինչ պատճառներով կտրուկ մտափոխվեց: Նա հայտարարեց, որ իր որոշման մասին ավելի ուշ կհայտնի՝ չհստակեցնելով, սակայն, թե երբ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հովիկ Աղազարյանը Ալեն Սիմոնյանից երաշխիքներ է ուզել իր եւ իր որդիների համար:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը կաշառքի գործով է անցնում, իսկ որդին՝ Վահե Աղազարյանը, ավտոներկրող ընկերությունների գործունեության արդյունքում թույլ տրված չարաշահումների գործով:

ՔՊ-ական պատգամավորը երկուշաբթի՝ Ալեն Սիմոնյանի հետ հանդիպմանը, պահանջել է, որպեսզի իշխանություններն իրեն երաշխիքներ տան, որ մանդատը վայր դնելուց հետո իրեն եւ որդիներին վտանգ չի սպառնա ու կալանքի չեն տանի:

Ալեն Սիմոնյանն էլ Հովիկ Աղազարյանին խոստացել է, որ կխոսի Նիկոլ Փաշինյանի հետ եւ կպատասխանի իրեն:

Ահա հենց այս պատճառով էլ պատգամավորը հայտարարեց, որ դեռ հարցեր կան քննարկելու, ինչից հետո նոր կհայտնի՝ դնո՞ւմ է մանդատը, թե՞ ոչ:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ԱԺ նախագահի մամուլի քարտուղար Մովսես Հարությունյանին՝ տեղեկությունը ճշտելու համար, սակայն վերջինս հերքեց այն:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ, ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՎԵՐՋԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը տելեգրամյան իր էջում գրել է. «Քանի որ իմ վարած կադրային քաղաքականությունը 2018-ից ի վեր ամենաշատ քննարկվող թեմաներից է, ուզում եմ որոշ դիտարկումներ անել վերջին նշանակումների առիթով:

Նոյեմբեր ամսվա ընթացքում բարձր պաշտոնների նշանակված կամ նման պաշտոններում առաջադրված մարդիկ երկու խումբ են ներկայացնում. կամ 2018 թ. Ժողովրդական, ոչ բռնի, թավշյահեղափոխական թիմի այնպիսի անդամ են, որ անցել են ընտրական ֆիլտրի միջով, արժանացել ժողովրդի վստահությանը եւ արդյունավետորեն իրացրել այդ վստահությունը, կամ 2018թ. Ժողովրդական, ոչ բռնի, թավշյա հեղափոխության պահին արդեն իսկ ներգրավված են եղել պետական կառավարման համակարգում, հեղափոխությունից հետո իրենց պոտենցիալն իրացնելու ավելի մեծ հնարավորություն են ստացել, արդյունավետորեն իրացրել են այդ հնարավորությունը, կառավարող մեծամասնության գաղափարաբանության նկատմամբ անհրաժեշտ համախոհություն են ցուցաբերել եւ 2018 թվականի ժողովրդական, ոչ բռնի, թավշյա հեղափոխության, իրական Հայաստանի, պետականության, ինքնիշխանության ու անկախության արժեհամակարգերի վրա հիմնված կառավարող թիմի մասն են դարձել:

Չեմ կարող ասել, թե առաջիկայում այլ բանաձեւեր չեն կիրառվի, բայց վերը նկարագրված բանաձեւերը կդառնան կադրային քաղաքականության հենասյուներ»:

ՌԱԶՄԱՕԴԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՐՎԱԾՆԵՐ

Լիբանանի մայրաքաղաքի կենտրոնական մասի չորս թաղամասերի բնակիչներին խորհուրդ է տրվել (երեկ) շտապ տարհանվել անվտանգ վայր՝ կապված «Հըզբոլլահ» կազմակերպության թիրախներին Իսրայելի ռազմաօդային ուժերի առաջիկա հարվածների հետ:

Ինչպես հաղորդում է Իսրայելի պաշտպանության բանակի խոսնակ Ավիչայ Էդրին X-ում, օդային հարձակումները կլինեն Ռաս Բեյրութ, Կորնիշ Մազրաա, Մսեյթբե եւ Ջուկաք էլ Բլաթ թաղամասերի վրա: Նա նշել է, որ հարվածները կհասցվեն այն շենքերին, որտեղ գտնվում են Լիբանանում «Հըզբոլլահի» գործունեությունը հովանավորող Al-Qard Al-Hassan ֆինանսական եւ վարկային ասոցիացիայի գրասենյակները:

«Ձեր ընտանիքների անվտանգության համար դուք պետք է անհապաղ լքեք այս շրջանների տները եւ մնաք դրանցից առնվազն 500 մետր հեռավորության վրա: Իսրայելական բանակը շուտով կսկսի ինտենսիվ գործողություններ Բեյրութի հարավում գտնվող ցամաքային թիրախների դեմ», - ասվում է հաղորդագրության մեջ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԱՅԴԵՆԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ ԹՐԱՄՓԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ

ԱՄՆ նախկին նախագահ Ջո Բայդենը կմասնակցի Դոնալդ Թրամփի երդմնակալության արարողությանը, հայտարարել է Սպիտակ տան մամուլի քարտուղարի տեղակալ Էնդրյու Բեյթսը:

«Նախագահը խոստացել է, որ ինքը կլինի այն մարդու երդմնակալության արարողությանը, ով կհաղթի ընտրություններում: Նա եւ առաջին տիկինը պատրաստվում են կատարել այդ խոստումը: Նախագահը դա տեսնում է որպես մեր ժողովրդավարական արժեքներին նվիրվածության կարեւոր դրսեւորում եւ հարգանքի տուրք ժողովրդի կամքին»,- լրագրողներին ասել է Բեյթսը:

Հիշեցնենք՝ Թրամփը հաղթել է նոյեմբերի 5-ին կայացած ԱՄՆ նախագահական ընտրություններում: Հանրապետականի երդմնակալությունը տեղի կունենա 2025 թվականի հունվարի 20-ին:

ԹՈՒՐՔԻԱՆ ԿԱՋԱԿՑԻ ՊԱՂԵՍՏԻՆԻՆ

Թուրքիան կաջակցի Պաղեստինի ժողովրդին մինչեւ Գազայի հատվածում հակամարտությունը դադարեցվի:

Վկայակոչելով «ՏԱՍՍ»-ը՝ այս մասին հայտարարել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը նախարարների կաբինետի նիստին, որը տեղի է ունեցել Անկարայում:

«Մենք մեր բոլոր ուժերով եւ միջոցներով կաջակցենք մեր եղբայրներին եւ քույրերին մինչեւ ցեղասպանությունը դադարի, եւ Գազան ու Պաղեստինը լիովին ազատագրվեն», - ասել է Էրդողանը ՝նշելով, որ Անկարան միջազգային բոլոր հարթակներում հայտարարում է իր աջակցությունը Պաղեստինին եւ Իսրայելի ագրեսիան դադարեցնելու անհրաժեշտության մասին:

ՎԵՐԸՆՏՐՎԵԼ Է

Վրաստանի նոր գումարման խորհրդարանը նոյեմբերի 25-ին կայացած իր առաջին նիստում բարձրագույն օրենսդիր մարմնի նախագահ է ընտրել Շալվա Պապուաշվիլիին, որն այդ պաշտոնն զբաղեցնում է 2021 թվականի դեկտեմբերից:

Ելույթ ունենալով պատգամավորների առջեւ՝ նա հայտարարել է, որ իր պարտականությունները կատարելու է ի բարօրություն վրաց ժողովրդի:

ՍԻՐԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 2,2 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

Մեկ օրում Սիրիայի սահմանը Լիբանանից հատել է ավելի քան 2,2 հազար մարդ: Այս մասին հայտարարել է Սիրիայի Արաբական Հանրապետությունում պատերազմող կողմերի հաշտեցման ռուսական կենտրոնի ղեկավարի տեղակալ, 1-ին աստիճանի կապիտան Օլեգ Իգնասյուկը:

«Օրվա ընթացքում 2229 մարդ Լիբանանի տարածքից հատել է Սիրիայի Արաբական Հանրապետության սահմանը «Էլ-Արիդա», «Էլ-Ջավասիա», «Էդ-Դաբուհիյա», «Ջիսր-Էլ-Քամար», Ջայդութ-Յաբուս» ուղղություններով»,- ասել է Իգնասյուկը:

ՓԱՇԻՆՅԱՆԻ «ԿԱՑՆԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ»

ԻՆՉ ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԵՑ

«Տվյալ շրջանի դաշտոնանկությունները ոչ թե անձնավորված են, այլ համակարգերի հետ են կապված: Կադրային այդ փոփոխությունները ոչ թե կոնֆլիկտային են, այլ աշխատանքային են»,- Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում ասել է Նիկոլ Փաշինյանը:

«Ժողովուրդ» օրաթերթն առանձնացրել է, թե ինչպիսի սկանդալային հայտարարություններ է արել հարցազրույցի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

1. Այո, SMS՝գրավոր տեքստով եմ խնդրել հրաժարական տալ պաշտոնյաներին, բայց ոչ կիրակի ուշ երեկոյան:

2. «Վարչապետի հորդոր չի եղել, եղել է վարչապետի խնդրանք»,- այս մասին Հանրայինի եթերում ասել է Նիկոլ Փաշինյանը՝ մեկնաբանելով ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի հրաժարականը:

Փաշինյանը հաստատեց, որ Կարեն Անդրեասյանը եւս իր խնդրանքով է հրաժարական ներկայացրել:

Իսկ Կարեն Անդրեասյանը գրել էր. «Ուզում եմ առաջ ընկնել պաշտոնանկությունների շրջանառվող շարքից: Այլեւս հրաժարվում եմ Բարձրագույն դատական խորհրդի թե՛ նախագահությունից եւ թե՛ անդամությունից: Առերեւույթ ամեն ինչ պարզ է, իսկ խորքային պատճառները չեմ ուզում ասել»:

Հարկ է նշել, որ, ինչպես գրել էր «Ժողովուրդ» օրաթերթը, Նիկոլ Փաշինյանը Կարեն Անդրեասյանին SMS հաղորդագրություն չէր ուղարկել:

3. «Պատրաստվում եմ Արթուր Պողոսյանի թեկնածությունն առաջադրել ՔԿ նախագահի պաշտոնում»:

4. «Ինչպես Արգիշտի Քյարամյանին եմ դիմել խնդրանքով, նույնկերպ եւ նույն պատճառաբանությամբ դիմել եմ Նարեկ Ջեյնալյանին եւ Հովիկ Աղազարյանին: Հույս ունեմ՝ իմ խնդրանքն անարձագանք չի մնա»:

Հավելենք, որ Նարեկ Ջեյնալյանը մանդատը վայր է դրել անմիջապես, իսկ Հովիկ Աղազարյանն իր որոշումը դեռ պետք է հայտնի:

5. «Գերատեսչությունների մեքենաների ցուցակն ուզել եմ եւ գրիչով խազեր քաշել: Սա կացնային մոտեցում է»:

6. «Ովքեր հանդես են գալիս արագաչափերը հանելու օգտին, ինքս կաջակցեմ, որպեսզի սկսեն ստորագրահավաք եւ արագաչափերը հանելու հարցով օրենսդրական նախաձեռնություն բերեն ԱԺ:

Եթե 50 000 ստորագրություն հավաքեն, կգան ԱԺ, ԱԺ-ն դեմ կքվեարկի, կանցնենք 300 000 ստորագրության: Այս հարցը պետք է լուծել համաժողովրդական ձեւով»:

7. «Հայաստանը փոխադարձության հիման վրա կհրաժարվի Ադրբեջանի դեմ միջազգային հայցերից, եթե կնքվի խաղաղության պայմանագիրը»:

8.«Մենք, որ ասում ենք Արեւմտյան Հայաստան, չե՞նք մտածում, որ ինչ-որ մարդկանց գրգռում է, ոնց որ մեզ է գրգռում Արեւմտյան Ադրբեջան տերմինը»:

Հենց այս պատճառով Նիկոլ Փաշինյանը ԱԺ ամբիոնից հայտարարեց. «Մեկն ասում է՝ ես մշեցի եմ, մյուսը՝ ես վանեցի եմ: Բա դիլիջանցին ո՞վ ա. այդպես մենք կորցնում ենք պետությունը»:

Հայտարարությունից հետո հաջորդած ակնարկը, որը եղավ ասուլիսի ընթացքում, ապացույցն է այն բանի, որ Հայաստանի իշխանություններն անում են ամեն բան, որ հաճոյանան Ադրբեջանին՝ Արեւմտյան Հայաստանի մասին չխոսելով:

9. Ո՞րն է Նիկոլ Փաշինյանի սափրվելու պատճառը. «Երբ որոշեցի սափրվել, ավագդստերս ծննդյան օրվա հետ համընկավ: 2018 թվականին, երբ ես ստանձնեցի վարչապետի պաշտոնը, հենց առաջին վայրկյանից կամ հենց դրանից մի քիչ էլ առաջ տեղեկատվական հոսքեր սկսեցին գալ: Այդ տեղեկատվական հոսքերը բերում էին ավելի շատ հարցեր, քան պատասխաններ: Հարցերի շատ մեծ խումբ կար, որոնց պատասխանը ես չունեի, եւ ակնհայտ էր ինձ համար, որ շատ դժվարություններ եմ ունենալու այդ հարցերի պատասխանները ինքս ինձ տալու համար: Իսկ 2020 թվականի պատերազմից հետո անցել է 4 տարի, ես չգիտեմ դա ինչքանով է լավ կամ վատ, ես պատերազմի մեկնարկից եւ ավարտից հետո՝չորս տարի, ամեն օր քնել եւ արթնացել եմ ինքս ինձ ուղղված հարցերով: Հարցեր են եղել, որոնք հնչել են հազարավոր անգամներ, եւ եթե ես ինձ ուզում եմ հոգեբանական եւ ենթագիտակցական վերլուծության ենթարկել, թե ես ինչու այդ որոշումը կայացրի, ինձ համար պատասխանը հստակ է եւ միանշանակ. այդ որոշումը կայացնելու պահին ինքս ինձ հարցեր այլեւս չունեի, եւ այդ որոշումը կայացնելու պահին իմ բարձրացրած բոլոր հարցերի պատասխանները ես ինձ տվել եմ»:

10. «Ադրբեջանին առաջարկել ենք ԵՄ դիտորդներին հանել սահմանազատված հատվածներից»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՆԱԽԿԻՆՆԵՐԻ ԿԱԴՐԸ»՝ ՀՀ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նոր նախագահը ՀՀ ֆինանսների նախարարի արդեն նախկին տեղակալ Էդուարդ Հակոբյանն է:

Անկուսակցական, 33-ամյա Հակոբյանը ֆինանսների փոխնախարարի պաշտոնը զբաղեցնում էր 2022-ից:

Էդուարդ Հակոբյանը 2013-ից ֆինանսների նախարարությունում տարբեր պաշտոններ է զբաղեցրել՝Մակրոտնտեսական քաղաքականության վարչությունում կրտսեր մասնագետից մինչեւ վարչության պետ: Էդուարդ Հակոբյանը ֆինանսների նախարարությունում, ասել է թե, «նախկինների» ժամանակներից է աշխատում եւ նրանց «աճեցրած» կադրն է:

Հակոբյանը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում դասավանդում, տնտեսագիտության թեկնածու է, իսկ ատենախոսության թեման եղել է «Պետության պարտքային քաղաքականության ազդեցությունը տնտեսական աճի վրա»:

Էդուարդ Հակոբյանը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բակալավրի եւ մագիստրոսական ծրագիրը սովորել եւ ավարտել է գերազանցությամբ:

Հակոբյանը մի շարք միջազգային ծրագրերի է մասնակցել ԱՄՆ-ում, Բոստոնում Թաֆթս համալսարանի Ֆլեթչեր դպրոցում, Վիեննայի միացյալ ինստիտուտում Ավստրիայում, Վաշինգտոնում Արժույթի միջազգային հիմնադրամի Դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականությունների վերլուծություն DSGE մոդելներով ծրագրին եւ այլ ծրագրերի տարբեր երկրներում:

Այսպիսով՝ ինչ ունեցվածք ունի ՀՀ ՊԵԿ նոր նախագահը:

Էդուարդ Հակոբյանը որպես Ֆինանսների փոխնախարար ներկայացրել է 2023 թվական անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագիր:

Համաձայն այդ հայտարարագրի՝ Հակոբյանը 2020 թվականին, երբ ՀՀ ֆինանսների նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետն էր, ձեռք է բերել բնակարան եւ ավտոկայանատեղի Երեւան քաղաքում:

Նախարարի նախկին տեղակալը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Հակոբյանը հայտարարագրել է մեկ TOYOTA մակնիշի մեքենա, որը սեփականության իրավունքով իրեն չի պատկանում, սակայն շահագործվում է իր կողմից:

Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 4 մլն 310 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝4 մլն դրամ:

ՀՀ ՊԵԿ նախագահի՝ 2023 թվականի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 19 մլն 987 հազար դրամ, որից 19 մլն 933 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ֆինանսների նախարարությունից: Եկամուտներից 22 հազար 058 դրամը քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտ է ՀՀ ֆինանսների նախարարությունից, իսկ 3 հազար դրամը քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտ է, որ ստացվել է ՀՀ տնտեսագիտական պետական համալսարանից, որտեղ դասախոս է:

Մանրամասները կարող եք կարդալ ArmLur.am կայքում:

ՄԵՋ Է ՀԱՍԵԼ ԲԱՑԱՌԻԿ ՆԱՄԱԿ

ԻՆՉՈՒ ՉԻ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՒՄ ԾԵԾԿՈՏՈՒՔԻ ԴԵՊՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ սեպտեմբերի 15-ին Երեւանի քաղաքապետարանի մոտ ծեծկոտուք էր տեղի ունեցել, որի ժամանակ հնչել էին կրակոցներ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կրակոցների գործով անցնում է Արարատի մարզի դատախազի տեղեկալ Ռեմ Ռշտունին:

Իսկ հիմա ամեն ինչի մասին ամենասկզբից. Shamshyan.com-ը սեպտեմբերի 15-ին՝ ժամը 00:05-ի սահմաններում, Գրիգոր Լուսավորիչ եւ Բեյրութ փողոցների խաչմերուկում վարորդների միջեւ միմյանց չզիջելու համար առաջացել էր վիճաբանություն, որի ընթացքում Toyota Camry-ի վարորդ, Երեւանի բնակիչ 21-ամյա Դավիթ Մադաթյանը դուրս է եկել ավտոմեքենայից եւ շարունակել վիճաբանել Mercedes G 55-ի վարորդ, Երեւանի բնակիչ 28-ամյա Հովհաննես Ասատրյանի եւ վերջինիս ուղեւոր, «Էրեբունի» հիվանդանոց տեղափոխված Տ. Ասրյանի հետ: Վերջիններս միմյանց հասցրել են հարվածներ, որի ժամանակ էլ գազային ատրճանակից կրակոցներ են հնչել:

Եվ ահա, այս դեպքից 2 ամիս անց գործով ուշագրավ իրավիճակ է:

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել նամակ, որտեղ գործով անցնող անձանցից մեկը՝ Վ. Մադաթյանը հայտնել է. «Սեպտեմբերի 14-ի երեկոյան Երեւանի քաղաքապետարանի մոտ տեղի է ունեցել միջադեպ, որի ընթացքում հանցավոր անձանց խումբը, ինչպես հետո պարզվել է դատախազ Ռ. Ռշտունու մասնակցությամբ փորձել է ինձ իրենց ավտոմեքենայով առեւանգել, ապա նաեւ ենթարկվել եմ ծեծի եւ ստացել եմ մարմնական վնասվածքներ:

Ինձ առեւանգելը եւ ծեծելը կանխել է եղբորս որդին՝ Ռուբեն Մադաթյանը, ով, այդ մասին իմանալով, շտապ հասել է դեպքի վայր, որից հետո հանցագործները դիմել են փախուստի:

Այդ դեպքից շուրջ 15-20 րոպե անց նշված միջադեպի մասնակից նույն անձինք ավելի մեծ խմբով իմ բնակության վայրում դարանակալել են ինձ եւ վրեժի շարժառիթով հրազենից մի քանի անգամ կրակել են անմիջականորեն իմ ուղղությամբ՝ցանկանալով ինձ կյանքից զրկել: Ողջ եմ մնացել միայն այն պատճառով, որ կրակոցներից երկուսի դեպքում զենքը խափանվել է (ասեչկա) եւ միայն կրակոցներից երկուսն են դիպել են ինձ, ազդրիս շրջանում ստացել եմ հրազենային միջանցիկ եւ մեկ կույր վիրավորում: Դրանից հետո վիրահատվել եմ եւ բուժում եմ ստացել «Նաիրի» ԲԿ-ում:

Պարզել եմ, որ իմ վրա կրակած ոմն Ռեմը հանդիսանում է Ռեմ Ռշտունի անունով դատախազության աշխատակիցը. Արարատի մարզի դատախազի տեղակալն է:

Համոզմունք ունեմ, որ քննչական մարմինը հակված է գործի օբյեկտիվ քննություն կատարել, սակայն վերը նշված հանգամանքով պայմանավորված՝դատախազությունը լուրջ խոչընդոտներ է ստեղծում գործի բացահայտման համար:

Նշված զարգացումները ինձ հասկանալի են, քանի որ իմ վրա կրակած անձը դատախազության աշխատակից է: Քրեական գործի նկատմամբ տեւական ժամանակ հսկողություն է իրականացրել Երեւան քաղաքի դատախազությունը: Երեւան քաղաքի դատախազ Ռ. Մանուկյանը հանդիսանում է Ռեմ Ռշտունու մտերիմ ընկերը, վերջիններս նաեւ տեւական ժամանակ միասին աշխատել են Արարատի մարզի դատախազությունում: Ստացվում է, որ դատախազը հսկողություն է իրականացրել ընկերոջ գործի նկատմամբ:

Դրանով պայմանավորած՝ իմ վրա հրազենով կրակած անձն ազատության մեջ է, նրա նկատմամբ որեւէ մեղադրանք եւ խափանման միջոց չկա, դեպքի բազմաթիվ հանգամանքների վերաբերյալ տաք հետքերով քննություն չկատարելը կասկածի տակ է դրել դեպքի բացահայտումն առհասարակ:

Հանձնարարել պարզելու՝ ինչու պատշաճ ընթացք չի տրվել իմ նախկին դիմումներին, ինչու է մինչեւ օրս դատախազի կողմից սպանության փորձ կատարելու գործը քննվում այդ սպանության փորձը կատարող անձի ընկերների դատախազական հսկողության պայմաններում»:

«Ժողովուրդ» օրաթերթը քաղաքացու բողոքի հիման վրա դիմեց ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղի ի պատասխան՝ վստահեցրին. «Քաղաքապետարանի մոտ տեղի ունեցած դեպքի առնչությամբ տեղեկացնում ենք, որ 2024 թվականի սեպտեմբերի 15-ին՝ ժամը 00:22-ին, ոստիկանության կենտրոնական բաժին ահազանգ է ստացվել, որ Երեւան քաղաքի Գր. Լուսավորիչ փողոցում՝ Երեւանի քաղաքապետարանի մոտ, լսվել են կրակոցի նմանվող ձայներ, որից հետո նկատել են մի քանի ավտոմեքենաներ, որից մեկի վարորդը վազելով դիմել է փախուստի: Քաղաքացիներից մեկի գլխին եղել են արյան հետքեր:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ դատախազ Ռեմ Ռշտունին ստացել է բաց գանգուղեղային վնասվածք, ձախից քունքոսկրի բազմաբեկոր ներհրված կոտրվածք, գլխուղեղի սալջարդ, էպիդուրալ եւ սուբարախնոիդալ արյունազեղումների ձեւով: Ռեմ Ռշտունին ճանաչվել է տուժող, իսկ 5 անձանց նկատմամբ հարուցվել են հանրային քրեական հետապնդումներ՝ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ եւ 12-րդ կետերով:

Քաղաքացու բողոքին ի պատասխան՝ դատախազությունը իրավիճակի հակառակ պատկերն է ներկայացնում, իսկ «Ժողովուրդ» օրաթերթը կհետեւի գործի ընթացքին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՈՒՍՈՒՑԻՉԸ ԴԵՌ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ Է

Ջոն Կիրակոսյանի անվան N20 դպրոցի ուսուցիչը, ում ամիսներ առաջ ձերբակալել էին անառակաբարո արարքի համար, շարունակում է մնալ կալանքի տակ:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ քննչական կոմիտեից:

Հիշեցնենք, որ դեռ հոկտեմբեր ամսին Ազգային անվտանգության ծառայությունը մտել էր Երեւանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոց, ինչից հետո ֆիզիկայի ուսուցչին բերման էին ենթարկել: Ուսուցիչը մեղադրվում է անառակաբարո արարքի համար:

Տեղի ունեցած դեպքերից հետո էլ դպրոցի աշակերտները դասադուլ էին իրականացրել՝ այդ կերպ փորձելով իրենց բողոքի ձայնը բարձրացնել, քանի որ դպրոցի տնօրեն Անահիտ Խոսրովյանին աշխատանքից հեռացրել էին եւ տնօրենի պաշտոնակատար էին բերել դրսից թեկնածուի, որի մասին իմանալով՝ մի շարք ծնողներ նույնպես գնացել էին դպրոց՝իրենց բողոքը հայտնելու:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

ՊԵԿ-ը ներկայացրել է շաբաթվա պատկերը:

Ոչ օրինական ճանապարհով փորձ է արվել ներմուծել ոսկենման զարդեր եւ 16 350 ԱՄՆ դոլլար,

օդային ճանապարհով փորձ է արվել ՀՀ ներմուծել առանց հայտարարագրման բրենդային վերարկուներ,

բացահայտվել է 1030 տուփ մաքսային հսկողությունից թաքցված ծխախոտների տեղափոխման դեպք,

մաքսային ծառայողները կանխել են չհայտարարագրված դեղորայքի ներմուծման փորձը,

ՀՀ պետական սահմանով փորձ է արվել անցկացնել չհայտարարագրված դիզելային վառելիք:

ԽԱՌՆԱՇՓՈԹ ԻՐԱՎԻՃԱԿ՝ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Էդգար Խաչատուրի Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, Արարատի եւ Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով քննվող թիվ ԱՎԴ4/0040/01/22 քրեական գործով հանդիսանալով մեղադրյալ, հիշյալ քրեական գործով հերթական դատական նիստի ընթացքում՝ 2024 թվականի փետրվարի 16-ին՝ ժամը 16:10-ի սահմաններում, դատարանի կողմից նույն գործով տուժող Անի Հայրապետյանին ուղղված՝ մեղադրյալի դեմ բողոք-պահանջ ունենալու հարցի վերաբերյալ հնչեցված պատասխանի կապակցությամբ, դատական նիստի ընթացքում դրսեւորել է ոչ պատշաճ վարքագիծ եւ դատարանի նկատմամբ ցուցաբերել է անհարգալից վերաբերմունք, որը դրսեւորվել է դատավարությանը մասնակից հանդիսացող տուժող Անի Հայրապետյանի հասցեին հայհոյանքներ հնչեցնելով:

Այնուհետեւ, նախագահող դատավորը պահանջել է մեղադրյալ Էդգար Գրիգորյանից հանդարտվել, դադարեցնել հակաբարոյական եւ հակահրավական վարքագիծը, ենթարկվել դատական նիստի կարգին, մինչդեռ վերջինս շարունակել է իր գործողությունները եւ կրկին հայհոյել տուժող Անի Հայրապետյանին՝ այդ կերպ վիրավորելով նրան ու խախտելով դատական նիստի կարգը, ինչը հնարավոր է եղել դադարեցնել միայն դատավորի կողմից դատական նիստի դահլիճից հեռացնելը դատավարական սանկցիայի կիրառելու արդյունքում:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 25-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 109 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԴՊՐՈՑՈՒՄ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

Կիրանց գյուղից հայտնում են, որ գյուղում մառախլապատ, ցուրտ եղանակ է, նորակառույց դպրոցում ջեռուցման համակարգը չի գործում, աշակերտները մրսում են: Այս տարվա սեպտեմբերի 1-ին շահագործման հանձնված, սահման հանդիսացող պատից մոտ 30 մետր հեռավորությամբ գտնվող շենքը պետք է ջեռուցվեր էլեկտրական մարտկոցներով: Սակայն դպրոցի ջեռուցման համակարգը չի գործում, քանի որ նախկինում դպրոցը էլեկտրական հոսանք է ստացել Կիրանց գյուղից: Կիրանցի դպրոցում տեղադրված է արեւային կայան, որը պետք է թեթեւացներ դպրոցի ջեռուցման համար օգտագործվելիք էլեկտրականության ծախսը: Սակայն արեւային կայանը չի գործարկվում էլեկտրական եռաֆազ հոսանքի գծի բացակայության պատճառով: Կիրանցի բնակիչները հայտնեցին, որ այսօր էներգետիկները Կիրանցի դպրոց եռաֆազ հոսանք են անցկացնում: Դպրոցի շենքը շահագործման հանձնելուց անցել է գրեթե 3 ամիս, ինչու այդ ընթացքում Կիրանցի դպրոց հոսանքի գիծ չեն անցկացրել: Չէ՞ որ մի շաբաթից ձմեռ է, ջեռուցման սեզոնը սկսված է: Այս խնդիրների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար նոյեմբերի 25-ին բազմաթիվ անգամ զանգահարեցինք Կիրանցի հիմնական դպրոցի երկարամյա տնօրեն Վոլոդյա Բաբինյանին: Կիրանց այցելած Նիկոլ Փաշինյանին արեւելյան ձեւով, երկու ձեռքով բարեւող Վոլոդյա Բաբինյանը, ով համագյուղացիների վկայությամբ՝ հանձնված հողերի դիմաց դրամական կլորիկ փոխհատուցում է ստացել, հավանաբար, վրդովված լինելով Կիրանցի դպրոցի մասին մեր նախորդ օբյեկտիվ հրապարակումներից, այդպես էլ չպատասխանեց մեր հեռախոսազանգերին:

ՀՐԱՀԱՆԳԵԼ Է ՓԱԿԵԼ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏԵՐԸ

Իջեւան քաղաքից հայտնեցին, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նոյեմբերի 24-ին Իջեւան քաղաքում հրահանգել է փակել Երեւանի պետական համալսարանի Իջեւանի մասնաճյուղի շենքի դիմաց՝ միջպետական ավտոճանապարհի եզրին գործող մի քանի ավտոլվացման կետեր եւ Իջեւանի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու մոտ գտնվող ավտոլվացման կետն այն պատճառաբանությամբ, որ այդ կետերից փրփրաջրերը լցվում են Աղստեւ գետ: Իջեւանցիները Նիկոլ Փաշինյանի այդ հրահանգի անտրամաբանական լինելուց ցնցված են, քանի որ Իջեւան քաղաքի եւ գետամերձ այլ բնակավայրերի հիմնարկների, բնակելի շենքերի, առանձնատների ամբողջ կոյուղաջրերը, դրանց մեջ՝նաեւ օճառաջրեր, լցվում են Աղստեւ: Գետ են լցվում նաեւ միջպետական ճանապարհի եզրին գործող ավտովերանորոգման կետերից հոսող, քիմիական նյութերով ավտոների շարժիչները լվանալուց հետո առաջացող կեղտաջրերը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽՈՍԵՆՔ ՓԱՍՏԵՐՈՎ

ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արդեն մի քանի օր է, ինչ ավարտվել է բանակայիններ ի ընմբշամարտի աշխարհի 37-րդ առաջնությունը, որի ժամանակ հայ մարզիկները մրցույթն ավարտել էին 3 ոսկե, 3 արծաթե եւ 8 բրոնզե մեդալով: ArmLur.am-տեղեկացավ, որ Հայաստանում 2 օր՝ նոյեմբերի 20-ից-21-ը, հնչել է Թուրքիայի օրհներգը, իսկ Հայաստանի օրհներգը այս օրերի ընթացում հնչել է 1 անգամ: Այսինքն՝ հայրենի իշխանությունների պնդաճակատության պատճառով, որ մրցույթին չներգրավեցին պրոֆեսիոնալ մարզիկների, թուրքական կողմին հաջողվեց ՀՀ-ում հնչեցնել իրենց օրհներգը: Իսկ ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Կարեն Գիլոյանը, ինչպես միշտ, իր տեղում չէ, իսկ իր պլորտում միշտ բարձիթողի վիճակ է:

Հիմա խոսենք, փաստերով: Եվ այսպես.

Ազատ ոճի ըմբշամարտում մի շարք քաշային կարգերում մեր առաջին համարները փոխարինվել են ավելի պակաս փորձառու մարզիկներով՝ ինչը, ի վերջո, անդրադարձել է թիմային ընդհանուր արդյունքի վրա:

- **57 կգ քաշային կարգ**

Մանվել Խնձրցյանը՝ Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, չի մասնակցել: Փոխարենը մասնակցել է Արման Հարությունյանը, ով միավոր չի բերել:

- **61 կգ քաշային կարգ**

Արսեն Հարությունյանը՝ Եվրոպայի քառակի չեմպիոն եւ աշխարհի եռակի բրոնզե մեդալակիր է, ում փոխարինել է Սարգիս Բեգոյանը, ով առաջնությունում նվաճել է արծաթե մեդալ:

- **65 կգ քաշային կարգ**

Վազգեն Թեւանյանը՝ Եվրոպայի չեմպիոն, աշխարհի գավաթակիր, մինչեւ 23 տարեկանների աշխարհի չեմպիոն, փոխարինվել է Անդրանիկ Ավետիսյանով, ով առաջնությունում դարձավ աշխարհի չեմպիոն:

- **70 կգ քաշային կարգ**

Արման Անդրեասյանը՝ Եվրոպայի գործող չեմպիոն եւ աշխարհի բրոնզե մեդալակիր, փոխարինվել է Արտավազդ Հարությունյանով, ով պարտություն է կրել:

- **92 կգ քաշային կարգ**

Կնյազ Իբոյանը՝ Եվրոպայի երիտասարդական չեմպիոն, չի մասնակցել: Փոխարենը Մուշեղ Մկրտչյանը նվաճել է բրոնզե մեդալ:

- **97 կգ քաշային կարգ**

Գուրգեն Սիմոնյանը չի մասնակցել, եւ այդ քաշային կարգում Հայաստանը ներկայացուցիչ չի ունեցել:

Հունահռոմեական ըմբշամարտում եւս մի շարք քաշային կարգերում մեր առաջատարները դուրս չեն եկել մրցահարթակ՝ փոխարինվելով իրենց քաշային կարգին չհամապատասխանող մարզիկներով:

- **77 կգ քաշային կարգ**

Մալխաս Ամոյանը՝ Փարիզի օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, աշխարհի չեմպիոն եւ Եվրոպայի եռակի չեմպիոն, չի մասնակցել: Փոխարենը մասնակցել է Աշոտ Խաչատրյանը, ով սովորաբար հանդես է գալիս 72 կգ քաշային կարգում: Աշոտ Խաչատրյանը 3-րդ տեղն է զբաղեցրել:

- **87 կգ քաշային կարգ**

Գեւորգ Թադեւոսյանը՝ մինչեւ 23 տարեկանների աշխարհի փոխչեմպիոն, բանակայինների աշխարհի առաջնության չեմպիոն, չի մասնակցել: Փոխարենը մասնակցել է Կարեն Խաչատրյանը՝ 82 կգ քաշային կարգի ըմբիշ, ով այս առաջնությունում դարձել է բրոնզե մեդալակիր:

- **97 կգ քաշային կարգ**

Վիգեն Նազարյանը՝ աշխարհի երիտասարդների չեմպիոն, չի մասնակցել, եւ այդ քաշային կարգում ներկայացուցիչ չենք ունեցել:

Ի դեպ, թուրքական լրատվամիջոցներում նշվում է, որ իրենց ազգային մարզիկները նվաճել են 8 մեդալ, որից 2-ը՝ ոսկե:

ArmLur.am-ը կապ հաստատեց մարզիչ Ավետիք Վարդանյանի հետ՝հասկանալու համար՝ արդյոք այդքան քննադատություններից հետո հայ մարզիկները արդարացրել են սպասված արդյունքները, թե ոչ, վերջինս մեզ հետ զրույցում ասաց, որ մարզիկները իրենց հնարավորության սահմաններում արել են ամեն բան:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 20-22-ը Երեւանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում անցկացվել է բանակայինների ըմբշամարտի աշխարհի 37-րդ առաջնությունը, որի նախօրեին հայտնի էր դարձել, որ հայ ուժեղագույն ըմբիշները չեն մասնակցելու: Խոսքը ժամկետային զինծառայության մեջ գտնվող ըմբիշներ Մալխաս Ամոյանի, Արսեն Հարությունյանի, Վազգեն Թեւանյանի, Արման Անդրեասյանի, Մանվել Խնձրցյանի, Վիգեն Նազարյանի, Գեւորգ Թադեւոսյանի, Կնյազ Իբոյանի մասին էր:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԿՑԻԱ՝ ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

MacBook Air ՇԱՀԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Արդշինբանկ»-ն իր բոլոր քարտապաններին առաջարկում է մասնակցել խաղարկության եւ շահել 7 հատ MacBook Air նոթբուքներից մեկը՝ կատարելով Հայաստանից դուրս դրամական փոխանցումներ այլ երկրի ցանկացած Visa քարտին:

Ակցիային մասնակցելու համար անհրաժեշտ է սույն թվականի նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 26-ը «Արդշինբանկ»-ի քարտից այլ երկրի Visa քարտին կատարել նվազագույնը 3 փոխանցում՝ յուրաքանչյուրը 20,000 ՀՀ դրամ եւ ավելի չափով: Բանկի հաղորդագրությունում նշվում է նաեւ, որ ակցիայի ընթացքում կխաղարկվի 7 հատ MacBook Air 13 MRXQ3 M3 2024: Ակցիայի ավարտին բոլոր մասնակիցները կստանան վիճակահանության օրը եւ ժամը պարունակող հաղորդագրություն, ինչպես նաեւ YouTube-ի փակ հղում, որի միջոցով հնարավոր կլինի հետեւել վիճակահանության ընթացքին: Հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ ավտոմատացված համակարգի միջոցով:

Խաղարկության հիմնական պայմաններից մեկն է տվյալ քարտից առաջին անգամ միջազգային փոխանցում կատարելը: Եթե դուք «Արդշինբանկ»-ի քարտապան եք, սակայն արդեն փորձ եք ունեցել կատարելու միջազգային փոխանցումներ, ապա հենց հիմա կարող եք ձեր մոբայլ բանկինգ հավելվածով պատվիրել Visa թվային քարտ, կատարել փոխանցումներ եւ մասնակցել խաղարկությանը:

Ակցիայի մանրամասներին կարող եք ծանոթանալ «Արդշինբանկ»-ի պաշտոնական կայքում կամ զանգահարելով շուրջօրյա զանգերի կենտրոն 012 222222 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 1 մարդ զոհվել է, 29-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԸՆԹԱՑԻԿ

ԹԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԴԵՊՔ

ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի շրջանակում, օրերս բացահայտել է շուրջ 260 մլն դրամի ստվերային շրջանառության դեպք:

Հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչության տարածքային թիվ 14 բաժին օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ Շիրակի մարզի Արթիկ քաղաքում գործող սննդամթերքի առեւտրով զբաղվող ընկերությունը վաճառված ապրանքների դիմաց գանձում է կանխիկ գումարներ եւ ոչ բոլոր դեպքերում է գնորդներին տրամադրում հսկիչ-դրամարկղային կտրոններ: Փոխարենը տրամադրում է միայն ներքին հաշվառման փաստաթուղթ՝ խուսափելով առանձնապես խոշոր չափի հարկեր վճարելուց:

Ձեռնարկված համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված օպերատիվ տվյալները հաստատվել են: Մասնավորապես, փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ սննդամթերքի առեւտրով զբաղվող տվյալ ընկերությանը պատկանող առեւտրի սրահում առկա է 260.240.000 ՀՀ դրամի ստվերային շրջանառություն:

Հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների նախազգուշացման եւ կանխման շրջանակում արձանագրված ստվերային շրջանառությունը ներկայացվել է հարկ վճարողին: Արդյունքում՝ վերջինս ինքնակամ հարկային մարմնին է ներկայացրել 2023 թվականի հոկտեմբեր, դեկտեմբեր, 2024 թվականի հունվարից սեպտեմբեր ամիսների ԱԱՀ-ի եւ ակցիզային հարկի եւ 2023 թվականի շահութահարկի ճշտված հաշվարկները:

Ընկերության իրացման շրջանառությունն ավելացել է 260.240.000 ՀՀ դրամի չափով եւ առաջացել է պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումար՝ 43.382.008 ՀՀ դրամ եւ շահութահարկ՝ 21.534.639 ՀՀ դրամի չափով:

Միջոցառման արդյունքում ընկերության մոտ, ընդհանուր առմամբ, առաջացել է 64.916.647 ՀՀ դրամի չափով լրացուցիչ հարկային պարտավորություն, որն ամբողջությամբ վերականգնվել է:

QR ՈՒՂԵՑՈՄՄԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ՝ 7 ՕՐ

Երեւանի քաղաքապետարանը տեղեկացնում է, որ տոմսային համակարգի անխափան աշխատանքի ապահովման նկատառումներով այսուհետեւ QR ուղետոմսերի վավերականության ժամկետը կնվազեցվի՝ սահմանվելով 7 օր:

«Տեղեկացնում ենք նաեւ, որ բանկային քարտերով վճարումների իրականացման ապահովումը ավարտական փուլում է, այժմ իրականացվում են փորձարկման աշխատանքներ: Առաջիկայում կհայտարարվի ամբողջական գործարկման մասին»,- նշված է հաղորդագրության մեջ:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԵՎ «ԿՈՐԻՋ...»

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ

Լինելով Հայաստանում առաջատար տեխնոլոգիական ընկերություններից մեկը, որը կարեւոր դեր է խաղում ֆինանսական տեխնոլոգիաների եւ նորարարական լուծումների ներդրման գործում, «ԹԵԼ-ՍԵԼ» ընկերությունը մեծապես կարեւորում է Հայաստանում կրթության զարգացումը, եւ առաջնորդվելով այդ տրամաբանությամբ՝ էական ներդրում է կատարում երեխաների զարգացման եւ կրթության առաջընթացի համար:

«Քանի որ կրթությունը հանդիսանում է ցանկացած հասարակության հիմքը, իսկ 12-ամյա կրթական համակարգը կարեւորագույն դեր է խաղում դպրոցականների գիտելիքների, հմտությունների եւ ապագա մասնագիտական հաջողությունների ձեւավորման մեջ, «ԹԵԼ-ՍԵԼ»-ը, լինելով սոցիալական պատասխանատվության բարձր գիտակցություն ունեցող ընկերություն, նպատակ ունի աջակցել ապագա սերնդին՝ մատչելի եւ որակյալ կրթություն ապահովելու միջոցով: Ընկերության աջակցությունն ուղղված է այն ոլորտներին, որոնք կարող են ուղղակիորեն ազդել Հայաստանի տնտեսական եւ տեխնոլոգիական զարգացման վրա»,-նշեց «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանը:

Այս առիթով «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանի եւ «Կորիզ կրթական ծրագրի» ղեկավար Սուրեն Ալոյանի միջեւ նոյեմբերի 25-ին ստորագրվեց հուշագիր: Այդ քայլով «ԹԵԼ-ՍԵԼ» ընկերությունը դարձավ «Koreez 2025»-ի մաթեմատիկայի մրցույթի պաշտոնական գործընկերը:

«ԹԵԼ-ՍԵԼ»-ի եւ «Կորիզ»-ի համագործակցությունն ուղղված է դպրոցական մակարդակում մաթեմատիկական կրթության զարգացմանը, ինչը հիմք կհանդիսանա աշակերտների համար ավելի մրցունակ դառնալու՝ թե՛ տեղական եւ թե՛ միջազգային միջավայրում: Հաշվի առնելով մաթեմատիկայի կարեւորությունը տնտեսության եւ տեխնոլոգիաների տարբեր ոլորտներում՝ այս նախաձեռնությունը կնպաստի նոր սերնդի մասնագիտական հմտությունների կատարելագործմանը:

«Կորիզն»-ն իր հերթին ինտելեկտուալ հարթակ է 3-12-րդ դասարանի աշակերտների եւ քոլեջի ուսանողների համար, որը հնարավորություն է տալիս մասնակցելու բազմազան եւ հետաքրքիր մրցույթների՝ նպաստելով աշակերտների կրթական մակարդակի բարձրացմանը:

«Կորիզ» կրթական ծրագրի ղեկավար Սուրեն Ալոյանը հայտարարեց նաեւ «ԹԵԼ-ՍԵԼ» ընկերության բաժնետոմսերի ձեռք բերման գործում մասնակցություն ունենալու մասին: «Կորիզ»-ը վստահ է, որ ներդրումը «ԹԵԼ-ՍԵԼ»-ի բաժնետոմսերում ոչ միայն ֆինանսական շահույթի մասին է, այն նաեւ ռազմավարական քայլ է՝ միավորելու կրթությունն ու տեխնոլոգիան: Այս քայլով մենք ապացուցում ենք, որ կրթության եւ տեխնոլոգիաների համադրումը լավագույն լուծումն է ապագա սերունդների կայուն զարգացման համար:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանի հավաստմամբ՝ իրենց բաժնետոմսերի նկատմամբ մեծ հետաքրքրությունը վկայում է դինամիկ զարգացման, տեսանելի աճի եւ ամենակարեւորը՝ ընկերության նկատմամբ մարդկանց վստահության մասին:

«Կորիզ» կրթական ծրագրի ղեկավար Սուրեն Ալոյանը նշեց, որ հիշյալ համագործակցությունը ոչ միայն ֆինանսական, կրթական եւ տեխնոլոգիական ոլորտների աջակցության մասին է, այլ նաեւ երկարաժամկետ ռազմավարական գործընկերություն՝ ուղղված Հայաստանի զարգացմանը, քանի որ կրթությունն է կորիզը երկրի:

Հետեւաբար իրենք ուրախ են լինել այնպիսի գործընկերոջ կողքին, ինչպիսին «ԹԵԼ-ՍԵԼ»-ն է, եւ միասին կերտել կրթության ու տեխնոլոգիաների ավելի պայծառ ապագա: Սուրեն Ալոյանը հրավիրեց բոլոր ընկերություններին, ինչպես նաեւ «Կորիզ» կրթական շարժման բոլոր մասնակիցներին՝ աշակերտներին, նրանց ուսուցիչներին եւ ծնողներին, հետեւելու իրենց օրինակին եւ մինչեւ նոյեմբերի 30-ը ձեռք բերել «ԹԵԼ-ՍԵԼ»-ի բաժնետոմսերը:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 13.12.2024 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.- ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

. Լոտ՝ ՀՀ, ք. Երեւան, Նոր Նորք, Գ. Բաղյան փողոց, 2-րդ նրբանցք, 1 շենք, 25 հասցեում գտնվող 67,4 քմ բնակարան,

. Լոտի մեկնարկային գինը՝ 26300000 (քսանվեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,

. Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար), Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

. իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am , www.borsa.am.

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԴԱԴԻՎԱՆՔԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

ԿԿԱՆԽՎԻ՞ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲՌՆԱՅՈՒՐԱՑՈՒՄԸ

Ադրբեջանի կողմից օկուպացված Արցախի Հանրապետության Քարվաճառ շրջանում գտնվող միջնադարյան հայկական Դադիվանքը փոխանցվել է Ուդի համայնքի տնօրինությանը:

Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների՝ «1993- 2020 թվականների օկուպացիայի ժամանակաշրջանում հայերը փորձել են կեղծել տաճարի պատմությունը՝ փորձելով այն ներկայացնել որպես իրենցը, իսկ ազատագրումից հետո վերադարձվել է նախնական տերերին»:

Ըստ monumentwatch.org-ի, 2020 թվականի պատերազմի ավարտից հետո ադրբեջանական պետական քարոզչամեքենան հայկական մշակութային ժառանգության բռնայուրացմանը միտված քարոզչության մեջ ակտիվորեն սկսել է ներգրավել Ադրբեջանի տարածքում բնակվող հայադավան քրիստոնյա ուդիներին: Գլխավոր պատճառն այն էր, որ ուդիները կովկասյան աղվանների միակ քրիստոնյա հետնորդներն են:

Մինչդեռ Դադիվանքի վաղեմության ու հայկականության մասին փաստում են վանքի պատերի վրա պահպանված արձանագրություններն ու վանքի տարածքում գտնվող հնագույն խաչքարերը: Վանքի կառուցման մասին պատմական տեղեկություններ ու վկայություններ կան արտասահմանյան տարբեր գրականությունների մեջ եւ մասնագիտական աշխատություններում:

Մատենագրական աղբյուրներում Դադիվանքն առաջին անգամ հիշատակվում է 9-րդ դարում «...ի խորաձորն, որ կոչի Դադոյի վանք»: Վանքի հիմնադրումն ավանդաբար կապվում է Թադեւոս առաքյալի աշակերտ Դադիի նահատակության հետ: Համաձայն ավանդության՝ վերջինս քրիստոնեություն տարածելու համար նահատակվել է, իսկ նրա գերեզմանի վրա հիմնադրվել է վանքը:

«Մինչեւ 12-րդ դարը վանքի պատմության եւ շինարարական գործունեության մասին տեղեկություններ հայտնի չեն, բայց արդեն 12-րդ դարի երկրորդ կեսին այն հոգեւոր եւ մշակութային խոշոր կենտրոն էր: Այդ մասին անուղղակի կերպով խոսվում է պատմիչի հաղորդման մեջ, որտեղ նկարագրված են 1145-1146 թթ. սելջուկյան պետության դեմ ապստամբած Գանձակի շահապին (քաղաքագլուխ) պատժելու նպատակով Պարսկաստանից եկած Չոլի զորապետի գործողությունները. «...այրեաց եւ զառաքելադիր ուխտ սրբութեանն, որ կոչի Դադուի վանք...»: Հարկ է նշել, որ Սելջուկյան թուլացած պետության դեմ պայքարում էին նաեւ Խաչենի իշխանները, որի պատճառով էլ բազմաթիվ վանքերի ու բերդերի հետ մեկտեղ բազմիցս վնասվել եւ ավերվել է նաեւ Դադիվանքը: Սակայն, այդ պայքարի շնորհիվ 12-րդ դարի երկրորդ կեսին Խաչենի իշխանները ձեռք են բերել որոշակի քաղաքական ինքնուրույնություն: Դադիվանքն այդ ժամանակ գտնվում էր գահերեց իշխաններ համարվող Հաթերքցիների իշխանության ներքո եւ նրանց հոգեւոր առաջնորդանիստ կենտրոնն էր: 12-րդ դարի երկրորդ կեսից սկսած, ինչպես վկայում են վանքի պատերին փորագրված արձանագրությունները, վանքում սկսվում են նորոգվել պաշտամունքային եւ աշխարհիկ շինությունները, ինչպես նաեւ կառուցվել նորերը, ինչի արդյունքում եւ հիմնականում ձեւավորվել է վանական համալիրի մերօրյա տեսքը:

Դադիվանքը բաղկացած է երկու մեծ՝ պաշտամունքային եւ աշխարհիկ հուշարձանախմբերից, որոնք տեղադրված են համապատասխանաբար վերին՝ հյուսիսային եւ ստորին՝ հարավային դարավանդների վրա եւ ներառված են միասնական պարիսպների մեջ: Առանձին շինություններ տեղադրված են նաեւ պարիսպներից դուրս: Վանքի գլխավոր մուտքը գտնվում է արեւմտյան կողմում: Այն որձաքարից շարված միակամար բացվածք ունի: Համալիրի երկրորդ մուտքն ավելի համեստ չափեր ունի եւ գտնվում է հարավարեւմտյան կողմում: Կառույցները կանգուն, կիսավեր, վթարային կամ ավերակ վիճակում են: Հյուսիսային դարավանդում գտնվում են եկեղեցիները, գավիթները, զանգակատունը, իսկ հարավայինում՝ աշխարհիկ շենքերը»:

Աղբյուր՝ monumentwatch.org

ԴԻՄՈՒՄ՝ ԳՈՌ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՖԻԼՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԹԱՑՔ Է ՏՎԵԼ

ՀՀ Գլխավոր դատախազությունը ստացել է Գոռ Վարդանյանի՝ «Կայսրության թեւերը» ֆիլմի առնչությամբ ներկայացրած դիմումը եւ սահմանված կարգով ընթացք տվել դրան: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին Դատախազությունից:

Երեկ կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարարությունից հայտնեցին, որ մասնագիտական վերլուծություն են իրականացրել Գոռ Վարդանյանի «Կայսրության թեւեր» ֆիլմի վերաբերյալ եւ դիմել էին Դատախազություն:

Ֆիլմի ռեժիսոր եւ պրոդյուսերը Գոռ Վարդանյանն է, ով մշտապես հանդես է եկել կրիմինալ ենթամշակույթ ներկայացնող ֆիլմերում: Այս ֆիլմը գլխավոր հերոսի՝ Դավիթի մասին է, ով պատերազմում զոհված հոր մահից հետո Շահումյանի շրջանից մոր հետ տեղափոխվում է Երեւան՝ ապրելու: Մեծ դժվարությունների միջով անցած երիտասարդը ձեռք է բերում իրեն հավատարիմ ընկերներ: Կյանքի բերումով Դավիթը վայելում է քրեական աշխարհի հեղինակությունը: Դավիթի ընկերները տարբեր մարդիկ են, նույնիսկ տարբեր ազգերից են՝ մեկը ռուս, մյուսը թաթար, բայց բոլորը, պատրաստակամ՝ մեկը մյուսին օգնելու, պատրաստ են արմատախիլ անելու բոլոր տեսակի հանցագործությունները: Կրիմինալ աշխարհում մեծ հեղինակություն վայելող Դավիթին դեռ շատ փորձություններ են սպասվում: Նա ամեն գնով պատրաստ է պայքարել հանցագործների դեմ, որոնց վրեժը լուծելու հենց ինքը Դավիթը՝ կյանքում հաստատելու արդարությունն ու ազնվությունը:

Այս ֆիլմը մեծ քննադատությունների առիթ է դարձել: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Գոռ Վարդանյանի հետ՝ մեկնաբանություն ստանալու նպատակով, սակայն այդպես էլ չհաջողվեց:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՇՈՏ ՆԱԴԱՆՅԱՆԸ՝ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՉԵՄՊԻՈՆ

Տեղի է ունեցել 2024 թվականի Հայաստանի վետերանների արագ շախմատի առաջնությունը:

Ինչպես հայտնում են Հայաստանի շախմատի ֆեդերացիայից, 50-ից բարձր տարիքային խմբում չեմպիոն դարձավ միջազգային վարպետ Աշոտ Նադանյանը, ով 7 հնարավորից վաստակեց 6.5 միավոր:

Երկրորդ հորիզոնականը զբաղեցրեց Տիգրան Սահակյանը, իսկ լավագույն եռյակը եզրափակեց Խաչատուր Մեսրոպյանը:

65-ից բարձր տարիքային խմբում չեմպիոն դարձավ Գարեգին Ալեքյանը, ով 7 հնարավորից վաստակեց 5.5 միավոր:

Երկրորդ հորիզոնականը զբաղեցրեց Գարիկ Խաչատրյանը, իսկ լավագույն եռյակը եզրափակեց Անդրանիկ Աբրահամյանը:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Իտալիայի Մոնտեսիլվանո քաղաքում ավարտին մոտեցող շախմատի աշխարհի 8-12 տարեկան պատանիների եւ աղջիկների աշխարհի առաջնությունում Տիգրան Համբարձումյանն առաջատարների թվում է:

Հայաստանը ներկայացնող շախմատիստը նախավերջին մրցափուլից առաջ մինչեւ 12 տարեկանների խմբում 9 հնարավորից վաստակել է 7 միավոր եւ կիսում է 2-9-րդ տեղերը:

ՊԵՏՐ ՅԱՆԸ ՀԱՂԹԵԼ Է ԴԵՅՎԻՍՈՆ ՖԻԳԵՅՐԵԴՈՒԻՆ

Մակաոյում կայացել է UFC-ի հերթական մրցաշարը, որի գլխավոր մենամարտում հանդիպել են հանրահայտ ռուս մարտիկ Պետր Յանը եւ բրազիլացի Դեյվիսոն Ֆիգեյրեդուն:

Թեթեւագույն քաշային կարգի մենամարտը տեւել է 5 ռաունդ, 31-ամյա Յանը մրցավարների միաձայն որոշմամբ հաղթանակի է հասել նախկին չեմպիոնի նկատմամբ (50-45, 50-45, 50-45):

Սա Յանի 18-րդ հաղթանակն է օկտագոնում, նա նաեւ ունի 5 պարտություն: 36-ամյա Ֆիգեյրեդուն ունի 24 հաղթանակ, 4 պարտություն եւ 1 ոչ-ոքի:

● *Նոյեմբերի 29-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Օրնիֆլ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է անհրաժեշտ անժամկետ հաշմանդամություն ձեռք բերելու համար:

Իսահակ Մխիթարյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ՝

ա) օրենքով տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց,

բ) վերականգնողական միջոցառումների հեռանկարի բացակայության, հաշմանդամի սոցիալական անբավարարության վերացման կամ նվազեցման անհնարինության դեպքերում, որոնք հետեւանք են անատոմիական արատով կամ անդառնալի կառուցվածքային փոփոխություններով կամ օրգանիզմի օրգանների կամ օրգան-համակարգերի ֆունկցիաների խանգարումով առողջության խաթարմամբ պայմանավորված կենսագործունեության կայուն սահմանափակման,

գ) իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որը բերում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (առնվազն 7 տարվա ընթացքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտման պայմաններում, իսկ 2 եւ 4 տարի դիտման պայմաններում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշման NN 2 եւ 3 հավելվածների),

դ) մեկ ականագնդի կամ մեկ աչքի տեսողության անվերադարձ բացակայության դեպքում:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշմանդամություն ունեցող անձն իրավունք ունի հրաժարվելու վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված վերականգնողական միջոցառման տեսակից, ձեւից եւ ծավալից, ինչպես նաեւ ամբողջ ծրագրի իրականացումից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ չափանիշներ են հաշվի առնվում վարկ տրամադրելիս: Արդյոք այդ չափանիշների առկայության դեպքում բանկը կամ այլ վարկային կազմակերպություն պարտավո՞ր է դիմողի հետ կնքել վարկային պայմանագիր:

Սուսաննա Գրիգորյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետեւաբար վարկատուն ինքն է ազատորեն որոշում՝ ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ: Այսինքն՝ բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը, գնահատելով վարկը մարելու հաճախորդի հնարավորությունը, ինքն է որոշում կնքել վարկային պայմանագիր, թե ոչ: Վարկունակությունը գնահատելու նպատակով կարող են հաշվի առնվել հետեւյալ հանգամանքները՝

- աշխատավարձի եւ այլ եկամուտների առկայությունը,
- վարկային պատմությունը,
- անշարժ եւ այլ գույքի առկայությունը,
- երաշխավորների առկայությունը,
- տարիքը,
- այլ հանգամանքներ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ վարկի տրամադրումը մերժելու հիմքերը սահմանվում են բանկի ներքին կանոններով, եւ եթե բանկը մերժում է հաճախորդի՝ վարկ ստանալու վերաբերյալ դիմումը, ապա պետք է նշի մերժման հիմքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ռեժիսոր Անժելա Ֆրանգյանի «Թթի տնական օղի» ֆիլմի նախագիծը Չեխիայում կայացած Ջիհլավայի միջազգային կինոփառատոնի «Նոր տեսլականներ» ֆորումին արժանացավ Current Time TV մրցանակին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-2 - 6 + 4 + 8
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 4 + 9
Կոտայքի նախալեռներ	-1 + 3 +9 + 12
Գեղարքունիք	- 3 - 7 + 5 + 8
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 14
Արագածոտնի լեռներ	- 2 - 6 + 2 + 7
Արագածոտնի նախալեռներ	-2 + 2 + 8 + 13

Արարատ	-1 + 2 +13 + 15
Արմավիր	-2 + 2 +13 + 15
Վայոց ձորի լեռներ	-1 + 2 + 3 + 6
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	-1 + 5 + 8 + 12
Սյունիքի նախալեռներ	+1 + 5 +12 + 16
ԼՂՀ	0 + 4 +11 + 14
Երեւան	+ 6 + 8 + 11 + 13

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*